«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Արշակունյաց 44

29 մայիսի 2026թ.
ժամը 15:00

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի
Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Թ.Ավագյան
անդամներ՝ Ն.Սարգսյան
Լ.Տաքսիլդարյան
Հանձնաժողովի քարտուղար՝Ս.Ավագյան
Նիստին բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Վ.Սիմոնյանը:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

---

## 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը

Հանձնաժողովի նախագահ՝ Թ.Ավագյան

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1.Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2.Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորման մասին,
3.Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ,
4.Գնման ընթացակարգի հայտերի ներկայացման և բացման մասին,
5. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների գնահատման մասին,
6.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ,
7. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի հայտերի գնահատման և արդյունքների ամփոփման մասին,
8. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:
Ընդունվել է որոշում՝ կողմ –3(երեք), դեմ – 0:

## 2. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով հայտարարված հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորման մասին

2.1 ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով հայտարարված հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ –3(երեք), դեմ – 0:

## 3. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

3.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ –3(երեք), դեմ – 0:

## 4. ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով գնանշման հարցման հայտերի ներկայացման և բացման մասին

4.1 Հայտերը թղթային եղանակով բացվել են 2026 թվականի մայիսի 29-ին ժամը 15:00-ին, ք.Երևան, Արշակունյաց 44 հասցեում:
4.2 Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակիցների անվանումները | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|
| 1. | ՋԱՆԻԿ ՍԵՎՈՅԱՆ ՍԵՅՐԱՆԻ ԱՁ | sevoyanjanik@gmail.com |
| 2. | Ալեքսան Մխոյան Հավենի ԱՁ | mkhoyanaleq@gmail.com |
| 3. | «Ի-մոշն» ՍՊԸ | sales@e-motion.am |

Ընդունվել է որոշում՝ կողմ –3(երեք), դեմ – 0:

5. <u>ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների կազմման և բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության մասին.</u>

5.1Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին:
5.2Մասնակիցների կողմից ներկայացված՝ բացված ծրարում առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը:
5.3Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:
Ընդունվել է որոշում՝ կողմ –3(երեք), դեմ – 0:

6. <u>Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ</u>

6.1 Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները և զբաղեցրած տեղերը հետևյալն են.
Չափաբաժին 1: Տեղեկատվական ֆիլմերի արտադրություն (խաղարկային անիմացիոն տեսահոլովակներ)

| Զբաղեցրած տեղեր | Հայտեր ներկայացրած մասնակիցներ | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Գնման գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ալեքսան Մխոյան Զավենի ԱՁ | 1 180 000 | - | 1 180 000 | 2 000 000 |
| 2 | ՋԱՆԻԿ ՍԵՎՈՅԱՆ ՍԵՅՐԱՆԻ ԱՁ | 1 185 000 | - | 1 185 000 | |
| 3 | «Ի-մոշն» ՍՊԸ | 1 500 000 | 300 000 | 1 800 000 | |

Ընդունվել է որոշում՝ կողմ –3(երեք), դեմ – 0:

6.2 Մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները և զբաղեցրած տեղերը հետևյալն են.
Չափաբաժին 2: Տեղեկատվական ֆիլմերի արտադրություն (անիմացիոն տեսահոլովակներ)

| Զբաղեցրած տեղեր | Հայտեր ներկայացրած մասնակիցներ | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը | Գնման գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | ՋԱՆԻԿ ՍԵՎՈՅԱՆ ՍԵՅՐԱՆԻ ԱՁ | 840 000 | - | 840 000 | 3 000 000 |
| 2 | Ալեքսան Մխոյան Զավենի ԱՁ | 1 780 000 | - | 1 780 000 | |
| 3 | «Ի-մոշն» ՍՊԸ | 2 400 000 | 480 000 | 2 880 000 | |

Ընդունվել է որոշում՝ կողմ –3(երեք), դեմ – 0:

7. <u>ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի հայտերի գնահատման և արդյունքների ամփոփման մասին,</u>
<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց.</u>

7.1Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատել բավարար:
7.2 ՀԿՏԿ-ԳՀԾՁԲ-26/4 ծածկագրով գնման ընթացակարգում հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել՝

- 1-ին չափաբաժնի մասով Ալեքսան Մխոյան Զավենի ԱՁ-ին,
- 2-րդ չափաբաժնի մասով ՋԱՆԻԿ ՍԵՎՈՅԱՆ ՍԵՅՐԱՆԻ ԱՁ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3(երեք), դեմ – 0:

8. <u>Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին</u>
<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց.</u>

8.1Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով՝ հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության մասին տեքստը և հրապարակել տեղեկագրում:
8.2Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:
8.3Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակիցներին՝
ա/ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումներ:
բ/ Պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ ներկայացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգով:
Ընդունվել է որոշում՝ կողմ –3(երեք), դեմ – 0:

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը.

Հանձնաժողովի նախագահ՝ ____________________Թ.Ավագյան

անդամեր՝ ____________________Ն.Սարգսյան

____________________Լ.Տաքսիլդարյան

Հանձնաժողովի քարտուղար՝____________________ Ս.Ավագյան